600.0306.01.08.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

1 օգոստոսի 2018 թվականի № 306Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի №391Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի «Գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների սահմանման ենթակա հանրային կազմակերպությունների ցանկը հաստատելու, այդ կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջներ սահմանելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №391Ա որոշման 2-րդ կետով հաստատված №2՝
   1) հավելվածի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
      «7. Գնումների կատարման ընթացակարգերը պետք է հիմնված լինեն գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք ստանալու սկզբունքի ապահովման վրա: Գնումների կատարման նախընտրելի ընթացակարգերը պետք է ապահովեն մրցակցությունը գնումների իրականացման ընթացքում:».
   2) հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-7.10 կետերով.
      «7.1. Հանրային կազմակերպության կողմից գնումը կատարվում է, երբ այն նախատեսված է տարեկան հաստատված բյուջեի հիման վրա կազմված գնումների պլանով և անհրաժեշտ է վերջինիս լիցենզավորված գործունեության

իրականացման, օրենսդրությամբ կամ Հանձնաժողովի այլ իրավական ակտերով սահմանված պարտավորությունների կատարման համար, իսկ շենքի (շինության) և(կամ) ենթակառուցվածքի գնման պարագայում նաև, երբ հիմնավորված է համարժեք նոր շենքի (շինության) և(կամ) ենթակառուցվածքի կառուցման տեխնիկատնտեսապես ոչ արդյունավետ լինելը:

7.2. Գնումը կատարվում է՝

1) մրցութային ընթացակարգով կամ
2) մեկ անձից՝ սույն հավելվածի 7.5 կետով նախատեսված դեպքերում:

7.3. Էլեկտրական էներգիայի, բնական գազի հաղորդման (փոխադրման) ու բաշխման համակարգերի նախագծով նախատեսված շենքերի, շինությունների կամ այլ օժանդակ կառույցների կառուցման համար հողամասի գնման նպատակով հանրային կազմակերպությունների ցանկում ներառված էլեկտրական էներգիայի, բնական գազի հաղորդման (փոխադրման) ու բաշխման լիցենզիա ունեցող անձը սահմանված կարգով դիմում է ներկայացնում պետական և (կամ) տեղական ինքնակառավարման մարմին՝ կցելով համապատասխան փաստաթղթերը:

7.4. Սույն հավելվածի 7.3 կետով նախատեսված դիմումը մերժվելու դեպքում հողամասի գնումը կատարվում է սույն հավելվածի 7.2 կետի 1-ին ենթակետով նշված ընթացակարգով:

7.5. Գնումները կարող են կատարվել մեկ անձից, երբ՝

1) ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, հրատապությունից ելնելով, գնման այլ ընթացակարգի կիրառումը կարող է հանգեցնել հանրային կազմակերպության կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունների կամ օրենքով, կամ այլ իրավական ակտերով սահմանված պարտավորությունների խախտման՝ պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել.
2) իրականացվում է էլեկտրական էներգիայի, բնական գազի, խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների գնում.
3) գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, ինչը պայմանավորված է նրա հեղինակային և

հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ.

4) ձեռք են բերվում ապրանքների լրացուցիչ քանակություններ, տեխնոլոգիական ամբողջականությունը համալրող խմբաքանակներ, որոնք նախատեսված են մատակարարի կողմից նախապես մատակարարված սարքավորումները (կառուցվածքները) փոխարինելու կամ լրացնելու համար, և սկզբնական մատակարարի փոփոխությունը կպարտադրի պատվիրատուին ձեռք բերել այլ հատկանիշներ ունեցող ապրանքներ, ինչը շահագործման ու պահպանման առումով կառաջացնի անհամատեղելիություն կամ անհամաչափ տեխնիկական բարդություններ.
5) իրականացվում է սույն հավելվածի 7.3 կետի համաձայն հողամասի ուղղակի վաճառքով գնումներ պետական և (կամ) տեղական ինքնակառավարման մարմնից.
6) իրականացվում է ենթակառուցվածքի գնում՝ համաձայն սույն հավելվածի 7.6 կետի.
7) դրանք նախատեսված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև Հանրային կազմակերպությունների գնումների կարգերով, եթե չեն հակասում «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նպատակներին և սկզբունքներին:

7.6. Ենթակառուցվածքի գնման անհրաժեշտության դեպքում, նախքան գնումն իրականացնելը, Հանրային կազմակերպությունը Հանձնաժողովի դիրքորոշումը ստանալու նպատակով դիմում է վերջինիս՝ ներկայացնելով.

1) գնման նպատակը
2) գնում կատարելու անհրաժեշտության տեխնիկատնտեսական հիմնավորումները
3) գնման ծավալի, իրականացման ժամանակացույցի և սպասվող արդյունքների գնահատականը
4) գնման ֆինանսավորման աղբյուրները և պայմանները
5) լիազոր մարմնի կողմից անշարժ գույքի գնահատողի որակավորում ստացած անձի (այսուհետ՝ Գնահատող) եզրակացությունը:

7.7. Այն դեպքում, երբ սույն հավելվածի 7.6 կետում նշված գույքի՝ Հանրային կազմակերպության կողմից իրականացված շուկայի ուսումնասիրության արդյունքում ձևավորված արժեքը չի գերազանցում 5,0 մլն դրամը, անհրաժեշտ է Հանձնաժողով ներկայացնել առնվազն մեկ, 5,1-20,0 մլն դրամի դեպքում՝ առնվազն երկու և 20,1 մլն դրամից բարձր արժեքի դեպքում՝ առնվազն երեք Գնահատողի եզրակացություն:

7.8. Սույն հավելվածի 7.6 կետում նշված գույքի գնման ուղղությամբ ներդրումները չեն կարող գերազանցել նույն կետի 5-րդ ենթակետում նշված Գնահատողի եզրակացությունում (եզրակացություններում) նշված արժեքը (նվազագույն):

7.9. Հանձնաժողովը, սույն հավելվածի 7.6 կետում նշված փաթեթը ստանալու պահից, 30 աշխատանքային օրվա ընթացքում, Հանրային կազմակերպություն է ներկայացնում գնման վերաբերյալ իր գրավոր դիրքորոշումը:

7.10. Սույն հավելվածի 7.9 կետի համաձայն բացասական դիրքորոշում ներկայացվելու դեպքում իրականացված գնումների ուղղությամբ ներդրումները չեն ներառվում սակագնի հաշվարկներում:».

3) հավելվածի 13-րդ կետը «գնման ժամանակացույցը:» բառերից հետո լրացնել հետևյալ նախադասությամբ.

«Անկախ որևէ հանգամանքից, գնումների պլանի կազմման նպատակով, Հանրային կազմակերպությունները պետք է կատարեն շուկայի ուսումնասիրություններ, որոնց արդյունքները (ոչ վաղ, քան նախորդող օրացուցային տարում իրականացված) պետք է գրանցվեն ընկերության կողմից և դառնան գնման վերաբերյալ փաստաթղթերի անբաժանելի մաս:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի №391Ա որոշմամբ հաստատված հանրային կազմակերպություններին օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Մ.ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
1 օգոստոսի 2018թ.